«ՎՐԱՍՏԱՆ»-Ը 95 ՏԱՐԵԿԱՆ Է

ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 96 - 97 (16394) ՇԱԲԱԹ, 26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼՈՒ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԻՑ

Դեկտեմբերի 23-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց զբաղեցրած պաշտոնից հեռանալու որոշման մասին:

«Մենք երիտասարդ ժողովրդավարություն ենք եւ մեծ նշանակություն ունի, թե ինչ օրինակ կփոխանցենք սերունդներին: Այն ժամանակ, երբ Վրաստանը վստահությամբ կանգնեց զարգացման ուղու վրա, ընդունեցի պաշտոնից հեռանալու որոշում: Ես այսօր հեռանում եմ իմ պաշտոնից, սակայն մնում եմ իմ երկրի հավատարիմ զինվորը»,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

«Վրացական երազանք» կոլիցիայի անդամներից կազմված Վրաստանի խորհրդարանական մեծամասնության՝ դեկտեմբերի 25-ին կայացած նիստում վարչապետի պաշտոնի թեկնածու է առաջադրվել երկրի արտաքին գործերի նախարար, փոխվարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլուն:

48-ամյա Գիորգի Կվիրիկաշվիլին բարձրագույն կրթություն է ստացել Թբիլիսիում եւ ԱՄՆ-ում, 1999-2004 թվականներին եղել է Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, այնուհետեւ բարձր պաշտոններ է զբաղեցրել երկրի մասնավոր ֆինանսական

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

2016-Ը՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին 2016-ը հռչակել է Եվրոպական պետության տարի: «Տարին հռչակում ենք Եվրոպական պետության, քանի որ այն կարեւոր ձեռքբերումները, որին հասնելու ենք համատեղ, այդ տարում կուժեղանան եւ իրական առաջընթաց քայլ կանենք: Այդ քայլը կանենք բոլորս միասին՝ ողջ հասարակայնությունը, քաղաքական սպեկտրը եւ, բնականաբար, վրացական բանակը: 2016 թվականին մենք կտեսնենք նոր նպատակները, որոնք Վրաստանի համար նոր նախադրյալներ կստեղծեն»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԵՎՐՈՊԱՆ ՄԵՐ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՋԸՆԹԱՑՆ Է»

Ողջունելով Եվրահանձնաժողովի կողմից Վրաստանի հարցով տրված դրական եզրակացությունը՝ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց. «Եվրահանձնաժողովի եզրակացությունը լրիվությամբ արտահայտում է այն առաջընթացը, որին Վրաստանը հասել է երեք տարվա ընթացքում: Վրաստանի կառավարությունը եւ իշխանությունները մեծ ջանքերի շնորհիվ, կարճ ժամանակամիջոցում կարողացան լրիվությամբ բավարարել այն պահանջները, որոնք նախատեսված են այցեգրերի ազատականացման գործողության ծրագրով»,- հայտարարեց նախագահը եւ հավելեց. «Մեր ընտրությունը եվրոպական ընտրությունն է, Եվրոպան մեր բարեկեցությունն ու առաջընթացն է»:

(Խորագրի շարունակությունը՝ 3-րդ էջում)

1920 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԼՈՒՅՍ ՏԵՍԱՎ ՄԵՐ ԹԵՐԹԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԸ

ՄԵՁ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ

Շնորհավորում եմ «Վրաստան» թերթի 95-ամյա հոբելյանը: Բարձր գնահատականի է արժանի այն, որ ձեր թերթը բազում տարիների ընթացքում եղել է ժողովրդավարական սկզբունքների, գաղափարների ու արժեքների քարոզիչը, նպաստել հասարակայնությանը ազգային փոքրամասնությունների ինտեգրմանը եւ հանդուրժողական հասարակության զարգացմանը:

Խմբագրության բոլոր աշխատակիցներին մեծ հարգանքով շնորհավորում եմ թերթի հոբելյանի առթիվ եւ մաղթում հաջողություններ մասնագիտական գործունեությունում:

Հարգանքներով՝ ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ
Վրաստանի նախագահ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿԻՑ

Ուրախ եմ, որ ինձ՝ որպես Վրաստանի խորհրդարանի նախագահ, տրվել է հնարավորություն շնորհավորելու «Վրաստան» թերթի ծննդյան օրը:

«Վրաստան» թերթը իր գործունեությամբ արժանվույն տեղ է գրավում Վրաստանի տպագիր լրատվամիջոցների շարքում: Թերթը հիմնվել է 1920 թվականին եւ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«95-ԱՄՅԱ «ՎՐԱՍՏԱՆԸ» ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆ Է ՈՒ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ

Իննսունհինգ տարի է անցել «Վրաստան» թերթի առաջին համարի լույսընծայումից: Պատահական չէ, որ այս թերթը գրեթե մեկ դար գոյություն ունի եւ ծառայում է ամենակարեւոր առաքելությանը՝ Վրաստանի ազգությամբ հայ քաղաքացիներին տեղեկատվություն է հաղորդում իրենց ծննդավայրում՝ Վրաս-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԹԵՐԹ, ՈՐԸ ՊԱՐԶ ՃԱԿԱՏՈՎ Է ՆԱՅՈՒՄ ԻՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Որպես Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, որպես Վրաստանի քաղաքացի, որպես վիրահայ, ես չեմ կարող անտարբեր լինել վիրահայոց քաղաքական-հասարակական կյանքում այնպիսի նշանակալից դերակատա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Շնորհավորում եմ «Վրաստան» թերթի խմբագրակազմին եւ ընթերցողներին թերթի հիմնադրման 95-րդ տարեդարձի առթիվ:

«Վրաստան» թերթը, շարունակելով ու զարգացնելով հայ-վրացական դարավոր բարեկամության ավանդույթները, իր մեծ նպաստն է բերել մեր երկու ժողովուրդների միջեւ եղբայրական հարաբերությունների ամրապնդման գործում:

Լուսաբանելով Վրաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային ու համայնքային կյանքը, միշտ բարձր պահելով հայ-վրացական բարեկամության լուսավոր ջահը՝ թերթը միշտ արժանապատվորեն ու պատասխանատվությամբ է կատարում իր առաքելությունը եւ այսօր էլ շարունակում է կատարել բարեկամության ու համագործակցության տարեգրի պատվաբեր եւ պատասխանատու դերը:

«Վրաստանը» մի յուրօրինակ կամուրջ է Հայաստանի եւ վիրահայության միջեւ, որ նաեւ մեր հայրենակիցներին հնարավորություն է ընձեռում հաղորդակից լինել հայրենի երկրի իրադարձություններին:

Կրկին շնորհավորելով հոբելյանի առթիվ՝ խմբագրակազմին մաղթում եմ ստեղծագործական հաջողություններ եւ ընթերցողների ավելի մեծ լսարան:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ
Հայաստանի Հանրապետության նախագահ

«ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆԻՆ

Վիրահայ համայնքի մեր հայրենակիցներ.

ՀՀ սփյուռքի նախարարության եւ անձամբ իմ անունից սիրով շնորհավորում եմ «Վրաստան» հայալեզու թերթի 95-ամյակի առթիվ:

Հիմնադրվելով հեռավոր 1920թ. Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում՝ այն արդեն շուրջ մեկ դար, առանց ընդհատումների, լույս է տեսնում եւ տարածվում երկրի հայաբնակ քաղաքներում ու գյուղերում:

«Վրաստանը» եղել է անդրկովկասյան երկրնե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆ»-Ը ՀԱՎԱՏԱՐԻՄ ՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՈՒՂԵԿԻՑ

Թանկագի՛ն բարեկամներ.

Այսօր Մայր հայրենիքի սահմաններից դուրս հրապարակվող պարբերականներից «Վրաստանը» նշում է իր 95-ամյա հոբելյանը: Իննուկես տասնամյակների անցած փառահեղ ուղի: Իրոք, փառահեղ, քանզի թերթը միշտ հավատարիմ գտնվեց իր ամենակարեւոր առաքելությանը՝ հաստատուն կամուրջ դառնալով Հայաստանի եւ Վրաստանի, հայ եւ վրաց ժողովուրդների միջեւ: Այն արժանապատվորեն կատարեց եւ ներկայումս էլ շարունակում է կատարել վիրահայ համայնքի ձայնի ազդարարի իր պատ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆ»-Ը 95 ՏԱՐԵԿԱՆ Է

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿԻՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

միշտ լուսաբանել է մեր երկրում ընթացող հասարակական-քաղաքական, մշակութային իրադարձությունները: Այն տարածվում է երկրի տարբեր տարածաշրջաններում՝ Սամցխե-Ջավախեթիում, Քվեմո Քարթլիում եւ, նշանակալից է, որ նպաստում է մեր ոչ վրաց հայրենակիցների ինտեգրմանը երկրի քաղաքական, պետական ու հասարակական կյանքին: Տարիներ շարունակ այն ակտիվորեն ներգրավված է ազատ, ժողովրդավարական, հանդուրժողական Վրաստանի շինարարության գործում: Թերթի էջերում մեծ տեղ է հատկացվում նաեւ Վրաստանի խորհրդարանական կյանքին: Այն միշտ հավատարիմ է մնում ժուռնալիստիկայի գլխավոր սկզբունքին՝ օբյեկտիվությանն ու անկողմնակալությանը:

«Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանին ու խմբագրության բոլոր աշխատակիցներին մեծ սիրով ու հարգանքով շնորհավորում եմ հիանալի հոբելյանի առթիվ, մաղթում մասնագիտական եւ ստեղծագործական հաջողություններ:

Հարգանքներով՝
ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒՓԱՇՎԻԼԻ
Վրաստանի խորհրդարանի նախագահ

«Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանին.

Թանկագին բարեկամ, հանձնիս Ձեզ ցանկանում եմ «Վրաստան» թերթի ողջ կոլեկտիվին շնորհավորել պանծալի հոբելյանը՝ պարբերականի ծննդյան 95-ամյակի կապակցությամբ:

Ձեր գլխավորած կոլեկտիվը հպարտությամբ կարող է ասել, որ միշտ արժանապատվորեն է կատարել իր պատմական առաքելությունը, դարձել վրաց եւ հայ ժողովուրդներին միմյանց կապող հաստատուն կամուրջ, քարոզել համակեցության, հանդուրժողականության եւ բարիդրացիության վեհ գաղափարներ:

Մաղթում եմ ձեզ հաջողություններ եւ երջանկություն անձնական կյանքում:

ԳԻԱ ՎՈԼՍԿԻ
Վրաստանի խորհրդարանի «Վրացական երազանք» խմբակցության նախագահ

ԹԵՐԹ, ՈՐԸ ՊԱՐԶ ՃԱԿԱՏՈՎ Է ՆԱՅՈՒՄ ԻՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րում ունեցող զանգվածային հինավուրց լրատվամիջոցի հանդեպ, ինչպիսին մեր կողմից անչափ սիրելի, ահա արդեն իր 95-ամյակը բոլորող «Վրաստան» թերթն է: Փառավոր տարիներ են եղել իսկապես այս տարիները, թեեւ անհաշիվ դժվարություններով ուղեկցվող, հատկապես՝ վերջին 20-25 տարիներին: Բայց միեւնույն է, թերթը պարզ ճակատով է նայում իր ընթերցողներին, որովհետեւ այն սնուցել է միշտ նրանց հոգեւոր աշխարհը, սովորեցրել լինել մարդ, սիրել հայրենիք ու բարի գործեր: Երբեք սեպ չի խրել ժողովուրդների բարեկամության մեջ: Ու դրանով էլ հատկապես սեր է նվաճել իր հանդեպ: Իսկ դժվար պահերին՝ ընթերցողի աջակցությունն ստացել: Այս առումով մեր շրջանը՝ Նինոծմինդան, միշտ կանգնած է թերթի կողքին: Բաժանորդները երբեք չեն լքել թերթը: Գիտակցել ու գիտակցում են, որ այն պահպանել է պետք, որ համացանցը մի կողմ, տպագիր մամուլը՝ մեկ այլ: Ես հոգով-սրտով շնորհավորում եմ թերթի վաստակած հոբելյանն ու բարի շարունակություն մաղթում նրա գոյությանը: Դրա մեջ համոզված եմ, որովհետեւ մեծ է թերթի կարեւորությունը մեր կյանքի ամենատարբեր ոլորտներում՝ քաղաքականությունից մինչեւ առօրյա կյանք, հասարակականից մինչեւ մշակութային: Շնորհակալություն ձեզ, թերթի տքնաջան աշխատակիցներ: Բարի հիշատակ թերթի նախկին նվիրյալներին:

ՀԵՆՋԵԼ ՄԿՈՅԱՆ
Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր

«95-ԱՄՅԱ «ՎՐԱՍՏԱՆԸ» ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆ Է ՈՒ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տանում տեղի ունեցող գործընթացների մասին եւ ապահովում վրաց հասարակական կյանքում նրանց մասնակցությունը:

«Վրաստանը» միակ հայալեզու թերթն է, որը տարածվում է ողջ երկրի մասշտաբով եւ նշանակալից կամուրջ է մեր եւ մեր քաղաքացիների միջեւ, որոնք դեռեւս լիարժեք չեն տիրապետում պետական լեզվին: Մենք անմիջականորեն «Վրաստանի» օգնությամբ, մեր խոսքն ենք հասցնում Սամցխե-Ջավախեթիում մեր հայ քաղաքացիներին, մանրամասն տեղեկատվություն հաղորդում մեր կողմից տարվող միգրացիոն քաղաքականության, արդարադատության, նոտարների, երեխաների եւ կանանց իրավունքների ու մյուս ոլորտներում ընթացող բարեփոխումների մասին: Թերթի միջոցով բնակչությանը տեղեկատվություն ենք ներկայացնում մեր նախարարությունում տեղ գտած նորամուծությունների, մեր ծառայությունների գործունեության վերաբերյալ: Անցյալ տարի «Վրաստանը» մեր բարեկամն ու գործընկերն էր եւ, ելնելով դրանից, արդարադատության նախարարության անունից ի սրտե շնորհակալություն եմ ցանկանում հայտնել թերթի խմբագիր Վան Բայբուրթյանին եւ խմբագրության բոլոր աշխատակիցներին:

Ձեր թերթին մաղթում եմ նորանոր հաջողություններ երկրի եւ ժողովրդի ծառայության գործում:

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ
Վրաստանի արդարադատության նախարար

ՊԱՏՎՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Թանկագին բարեկամներ.

Այսօր նշանակալից օր է, նշանակալից ոչ միայն նրանով, որ «Վրաստան» թերթը դարձավ 95 տարեկան, այլեւ նրանով, որ Վրաստանում հայկական թերթի ինուկեստասնամյա գործունեությունը, ինքնին, բացառիկ երեւույթ է: Եվ ի պատիվ թերթի աշխատակիցների անցած ու ներկա սերնդի, պետք է ասել, որ նրանք պատվով կատարեցին ու կատարում են իրենց գլխավոր առաքելությունը՝ ծառայում վրաց եւ հայ ժողովուրդների բարեկամության, Վրաստանի եւ Հայաստանի միջպետական հարաբերությունների խորացման, վրաց հասարակությունում Վրաստանի հայազգի քաղաքացիների ինտեգրման, հումանիզմի, հանդուրժողականության, քաղաքացիական իրավահավասարության վեհ գաղափարների մարմնավորման գործին:

Ի սրտե շնորհավորում եմ «Վրաստանի» հոբելյանը, մաղթում նորանոր հաջողություններ այդ վսեմ նպատակներին հասնելու ճանապարհին:

Պաատա Զաքարեիշվիլի
Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար

«ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րի խորհրդայնացման, ապա եւ անկախացման գործընթացների իրական վկան ու տարեգիրը եւ այսօր էլ շարունակում է ոչ միայն Վրաստանի, այլեւ տարածաշրջանի երկրների ու համայն հայության տնտեսական, հասարակական, քաղաքական ու մշակութային կյանքի մասին տեղեկություններ հաղորդելու իր ակտիվ գործունեությունը:

Տարբեր ժամանակներում լույս ընծայվելով «Կարմիր աստղ», «Մարտակոչ», «Պրոլետար», «Սովետական Վրաստան» եւ «Վրաստան» անուններով՝ թերթը երբեք չի փոխել իր դիմագիծն ու որդեգրած քաղաքականությունը, իր էջերում մի շարք հավելվածների միջոցով ներկայացրել ժամանակի գրականության ու արվեստի, գիտության ու կրթության ներկայացուցիչներին, նրանց խնդիրները:

«Վրաստանի» էջերում տպագրվել են հայ եւ վրացի մեծերի՝ Հովհ.Թումանյանի, Ավ.Իսահակյանի, Ե.Չարենցի, Դ.Դեմիրճյանի, Ա.Բակունցի, Ստ.Զորյանի, Շ.Ռուսթավելու, Գալաքտիոն Տաբիձեի, Նոդար Դումբաձեի, Մորիս Փոցխիշվիլու եւ այլոց ստեղծագործությունները:

Իր գործունեության ողջ ընթացքում թերթն իսկական դարբնոց է եղել արհեստավարժ լրագրողական սերունդներ դաստիարակելու գործում: Այն դարձել է հայկական համայնքի օգնականն ու լրատուն, քանզի թերթի աջակցությամբ նաեւ համայնքը տեղեկացվում է երկրում առկա քաղաքական եւ կրթամշակութային անցուդարձի մասին, ստանում թարմ լուրեր: Եվ իզուր չէ, որ վրացահայ համայնքի համար այսօր էլ «Վրաստանը» շարունակում է մնալ ամենաընթերցվող թերթը: Այն դարձել է յուրօրինակ կամուրջ հայրենիքի եւ վիրահայության միջեւ: Հուսով ենք, որ այսուհետ եւս, մնալով իր բազմահազար ընթերցողների բարեկամն ու խորհրդատուն, թերթը կշարունակի կապը Մայր հայրենիքի հետ եւ իր նպաստը կբերի Հայաստանի Հանրապետության 25-ամյա հոբելյանական ձեռնարկները, ինչպես նաեւ տոնի կարեւորությունը լուսաբանելու եւ հայ-վրացական դարավոր բարեկամության զարգացման ու առաջընթացը ներկայացնելու համար:

Սիրելի Վան, ուզում եմ ընդգծված շնորհավորել խմբագրակազմին եւ Ձեզ այս գեղեցիկ եւ հասուն հոբելյանի առթիվ եւ մաղթել բազում ընթերցողներ եւ մեծ տարածում: Օգտվելով առիթից՝ շնորհավորում եմ նաեւ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ եւ ցանկանում աշխարհին խաղաղություն, տարածաշրջանին կայունություն, իսկ հայ-վրացական դարավոր անխախտ բարեկամությանը՝ հավերժություն:

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ սփյուռքի նախարար

«ՎՐԱՍՏԱՆ»-Ը ՀԱՎԱՏԱՐԻՄ ՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՈՒՂԵԿԻՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վավոր առաքելությունը՝ դառնալով Վրաստանի տարբեր երկրամասերում սփռված հայերի ցանկալի հյուրն ու հավատարիմ եւ մշտական ուղեկիցը: Անցած 95 տարիների ընթացքում թերթը երբեք չշեղվեց ազգամիջյան բարեկամության, հանդուրժողականության, իրավահավասարության վսեմ գաղափարների ջատագովի իր ընտրած մայրուղուց՝ դառնալով վիրահայության կյանքի մատենագիրն ու լավի եւ բարու քարոզիչը:

Եվ այդ ամենը արժանվույն գնահատվել է ինչպես խորհրդային իշխանության, այնպես էլ՝ վրաց նորանկախ պետականության օրոք: Եվ պատահական չէր, որ թերթի համար հոբելյանական այս տարում Վրաստանի ժողովրդական պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհուրդը թերթին շնորհեց «Հանդուրժողականության աջակից լրատվամիջոցի» կոչումը՝ դրանով իսկ ընդգծելով պարբերականի դերը վրաց հասարակությունում վիրահայերի ինտեգրման, վրաց հասարակական կյանքում Վրաստանի հայ համայնքի ակտիվ մասնակցության գործում:

Թանկագի՛ն բարեկամներ, թերթի 95-ամյա հոբելյանի առթիվ ի սրտե շնորհավորում եմ ձեզ՝ «Վրաստանի» խմբագրակազմի հին ու նոր աշխատակիցներիդ, մաղթում ստեղծագործական նորանոր հաջողություններ կամովին ստանձնած մեծ առաքելության քարոզչության, հայապահպանության գործում անգնահատելի ծառայության համար:

Հարգանքներով՝ ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան

«ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄԻՆ

Վիրահայոց թեմի հոգեւոր դասի, պաշտոնեության եւ հավատացյալների անունից, շնորհավորում եմ «Վրաստան» թերթի խմբագրակազմին թերթի 95-ամյակի կապակցությամբ:

Հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային օրրաններից մեկում՝ հնամենի Թբիլիսիում, 95 տարի առաջ հիմնադրված «Վրաստան» թերթը սերունդների հոլովույթում դարձել է մշակութային արժեք՝ շաղկապելով նոր ժամանակները անցյալի հետ: Պատմության տարբեր հատվածներում թերթը, իր ընթերցողի քաղաքացիական արժեքներին հավատարիմ, կատարել է իր ստանձնած առաքելությունը պատշաճությամբ եւ ամենայն պատասխանատվությամբ՝ Վրաստանի ամենահեռավոր հայկական համայնքներին հասցնելով լրատվություն, հայկական հասարակական ու մշակութային կյանքի առօրյան, հայ-վրաց բարեկամական կապերը լուսաբանող նյութեր: Իսկ խմբագրության աշխատակազմը, թբիլիսյան մամուլի ավանդներին հավատարիմ, «Մշակ»-ի, «Մեղու Հայաստանի»-ի օրինակով, դարձել է իր գործի նվիրյալը՝ վառ պահելով թբիլիսահայ մշակութային կարեւոր օջախներից մեկը: Թերթը բարձր է գնահատվում ոչ միայն Վրաստանում, այլ նաեւ Մայր հայրենիքի կողմից, որ մինչ այսօր իր աջակցությունն է բերում թերթի աշխատանքներին: Արդի էլեկտրոնային լրատվական դաշտի բազմազանության ներկապնակում, «Վրաստան» թերթը շարունակում է իր ուրույն դերն ունենալ Վրաստանի հայության կյանքում, ժողովրդին ներկայացնում է Վրաստանի գործող օրենսդրությունը, տարբեր խորհուրդներով օգտակար լինում մանավանդ շրջաններում ապրող մեր ժողովրդի զավակներին: Վերջին տասնամյակներում թերթը ղեկավարում է հասարակական, քաղաքական հմուտ գործիչ Վան Բայբուրթյանը, ում հեղինակությամբ եւ անբասիր աշխատանքի արդյունքում շարունակում է լույս տեսնել թերթը՝ չնայած բոլոր դժվարություններին:

Թող Աստված օրհնի հայոց մշակույթի «Վրաստան» օջախը, խմբագրին եւ խմբագրական ողջ անձնակազմին՝ մաղթելով քաջառողջ արեւշատ տարիներ, ստեղծագործական անսպառ եռանդ:

Աղոթքով եւ օրհնությամբ՝

ՏԵՐ ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ
Վիրահայոց թեմի առաջնորդ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ու բանկային կառույցներում: 2012 թվականի հոկտեմբերի 25-ից նա զբաղեցնում էր էկոնոմիկայի նախարարի պաշտոնը, 2013 թվականի հուլիսից միաժամանակ փոխվարչապետ էր: 2015 թվականի սեպտեմբերի 1-ին նշանակվել է ԱԳ նախարարության ղեկավար՝ պահպանելով փոխվարչապետի պաշտոնը:

Համաձայն Վրաստանի սահմանադրության, վարչապետի հրաժարականի դեպքում, կառավարության լիազորությունները կասեցվում են եւ գործադիրի անդամները սկսում են ժամանակավորապես կատարել իրենց պարտականությունները:

Վրաստանի նախագահը 7 օրվա ընթացքում խորհրդարանի հաստատմանը պետք է ներկայացնի խորհրդարանական մեծամասնության ներկայացրած վարչապետի նոր թեկնածուին:

Իր հերթին, վարչապետի թեկնածուն պետք է խորհրդարանին ներկայացնի կառավարության անդամ թեկնածուներին կառավարության նկատմամբ վստահություն ձեռք բերելու համար: Խորհրդարանը եւս 7 օրվա ընթացքում պետք է դիտարկի կառավարությանը վստահություն հայտնելու հարցը եւ այն ընդունի գրավոր մեծամասնությամբ:

Այդ գործընթացից հետո երկու օրվա ընթացքում նախագահը պետք է հաստատի նոր կառավարությունը՝ նոր վարչապետով:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒՓԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԱՅՍՕՐ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԵՎՐՈՊԱՑԻ ԵՆՔ, ՔԱՆ ԵՐԵԿ»

Ինչպես նշեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, Եվրամիության հետ այցեգրերի ազատականացումը մեր բնակչության վաղեմի երազանքն էր: Նրա խոսքերով, Եվրահանձնաժողովի դրական եզրակացությունից հետո, Վրաստանի վրա դրվում է է՛լ ավելի մեծ պատասխանատվություն: «Ես շնորհավորում եմ Վրաստանի բոլոր քաղաքացիներին, դա մեր երկրի մեծ հաղթանակն է: Այսօր մենք շատ ավելի եվրոպացի ենք, քան երեկ, մենք միշտ այդպես էլ մտածում էինք, սակայն նշանակալից է, որ՝ Եվրոպան էլ սկսեց այդպես մտածել»,- հայտարարեց խորհրդարանի նախագահը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՆԵՐՈՒՄ՝ 238 ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին 238 դատարարտյալների համաներում է հայտարարել:

Այդ մասին դեկտեմբերի 25-ին Թբիլիսիում կայացած ճեպազրույցին հայտնեց համաներման հանձնաժողովի նախագահ Զվիադ Քորիձեն:

Ներման արժանացածներից 18-ը կանայք են, երեքը՝ անչափահասն: Ազատազրկման վայրերից դուրս կգան 172 դատապարտյալներ, որոնց նախագահն ամբողջությամբ է ներում շնորհել: 172 դատապարտյալներից 11-ը կանայք են, երկուսը՝ անչափահաս: Մնացած 66 ներված դատապարտյալները կմնան ազատազրկման վայրերում, կկրճատվեն նրանց պատժամկետները:

Համաներման հանձնաժողովը քննարկել է 1452 դատապարտյալների գործեր:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԷԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ



Դեկտեմբերի 23-ին Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը հանդիպում ունեցավ Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախա Կալաձեի հետ: Վերջինս դեկտեմբերի 23-24-ին մասնակցեց Երեւանում անցկացված Հայաստանի, Վրաստանի, Իրանի եւ Ռուսաստանի էներգետիկայի նախարարությունների համատեղ նիստին՝ նվիրված տարածաշրջանային էներգետիկ համագործակցության զարգացման հեռանկարներին:

Հանդիպմանը զրուցակիցները քննարկեցին երկկողմ եւ բազմակողմ էներգետիկ համագործակցության խորացմանը վերաբերող հարցեր: Հովիկ Աբրահամյանը, մասնավորապես, կարեւորեց Հայաստան-Վրաստան 400 կվտ/ժամ էլեկտրահաղորդման գծի կառուցման, ինչպես նաեւ այլ համատեղ ծրագրերի իրականացումը:

Կողմերն անդրադարձան նաեւ երկկողմ առեւտրատնտեսական կապերի ընդլայնման հեռանկարներին՝ ընդգծելով, որ առկա են չիրացված մեծ ներուժ եւ հնարավորություններ: Այս առումով, երկուստեք կարեւորվեցին Հայաստանի եւ Վրաստանի միջեւ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի ակտիվ աշխատանքն ու գործարար համաժողովների անցկացումը:

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի Ց ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԴՅՈՒՐԱՑՐԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, դեկտեմբերի 17-ին Մոսկվայում անցկացված մամլո ասուլիսում, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարեց, որ Մոսկվան պատրաստ է չեղարկել Վրաստանի հետ այցեգրային պայմանակարգը:

Ի կատարումն այդ հայտարարության, Ռուսաստանի ԱԳ նախարարության կողմից տարածված տեղեկատվության համաձայն, դեկտեմբերի 23-ից Վրաստանի քաղաքացիների համար այցեգրային պայմանակարգը դյուրացվում է: «Ելնելով ռուս-վրացական հարաբերությունների նորմալացման գործընթացի ենթատեքստով եւ մեր երկու երկրների միջեւ դրական միտումների խրախուսման շահերից՝ 2015 թվականի դեկտեմբերի 23-ից Վրաստանի քաղաքացիները իրենց գործնական աշխատանքային, ուսուցման եւ հումանիտար այցեգրերը, ինչպես նաեւ մասնավոր այցեգրերը, կձեւակերպեն ցանկացած ժամանակահատվածով, անկախ հրավիրողների հետ ազգակցական կապի առկայության եւ Ռուսաստանի մարմինների կողմից սահմանված կարգով տրված հրավերների: Ռուսական կողմը տրամադրված է առաջիկայում էլ իրականացնել քայլեր՝ ուղղված երկու երկրների քաղաքացիների հաղորդակցության պայմանների բարելավմանը, չբացառելով փոխադարձության հիման վրա անայցեգրային պայմանակարգի ներդրումը»,- ասված է Ռուսաստանի ԱԳ նախարարության հայտարարության մեջ:

Ռուսաստանի Դաշնության խորհրդի խոսնակ Վալենտինա Մատվիենկոն ակնկալում է, որ 2016 թվականին կհաջողվի անայցեգիր ռեժիմ կազմակերպել ՌԴ-ի եւ Վրաստանի միջեւ:

Նրա խոսքով, մինչեւ դեկտեմբերի վերջը տեղի կունենա Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ այցեգրային ռեժիմի պարզեցում, կլինեն դյուրացումներ: Ընդսմին, Մատվիենկոն նշեց, որ «այցեգրերի լիակատար չեղարկումն ավելի տեւական գործընթաց է»:

«Բայց ես ակնկալում եմ, որ արդեն հաջորդ տարի մենք կկարողանանք անայցեգիր ռեժիմ սահմանել Վրաստանի քաղաքացիների համար»,- ընդգծեց Ռուսաստանի Դաշնության խորհրդի խոսնակը:

ՀԱՐՑՈՒՄ

NDI. «ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՆՈՒՄ ԵՆ ԱՆՓՈՓՈԽ»

NDI NATIONAL DEMOCRATIC INSTITUTE FOR INTERNATIONAL AFFAIRS

ԱՄՆ-ի Ազգային-ժողովրդավարական ինստիտուտի (NDI) կողմից անցկացված նոր հարցման արդյունքներով, երկրի բնակչության համար առաջնահերթությունների հերթականությունը մնում է անփոփոխ: Դրանք են՝ զբաղվածությունը, սոցիալ-տնտեսական իրավիճակն ու երկրի տարածքային ամբողջականությունը:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԱՌԱՋՆԱՅԻՆ

«Ազգային ո՞ր խնդիրներն են ձեր եւ ձեր ընտանիքի համար ամենակարեւորները» հարցին, մասնակիցների 57 տոկոսը պատասխանել է՝ աշխատատեղերը, 29 տոկոսը նշել է աղքատության խնդիրը եւ նույնքան էլ՝Վրաստանի տարածքային ամբողջականությունը: Բացի այդ, հարցվածների 28 տոկոսը կարեւորել է կենսաթոշակի հարցը, իսկ 26 տոկոսը՝ գների աճը:

Ավելի վաղ, մարտի 27-ից մինչեւ ապրիլի 19-ն անցկացված «Հասարակական տրամադրությունը Վրաստանում» հետազոտության համաձայն, այն մասին, որ աշխատատեղերն ամենակարեւոր ազգային հարցն են Վրաստանում, հայտարարել էր հարցվածների 66 տոկոսը, գների աճը՝ 43 տոկոսը, իսկ աղքատությունը՝ 39 տոկոսը:

Տարածքային ամբողջականության հարցը հայտնվել է չորրորդ տեղում՝ 27 տոկոս: Կենսաթոշակների հարցը կարեւոր է եղել հարցվածների 21 տոկոսի համար, աշխատավարձերը՝ 17 տոկոսի, մատչելի առողջապահությունը՝ 17 տոկոսի, Ռուսաստանի հետ հարաբերությունները՝ 12 տոկոսի համար:

Ո՞Ր ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՎԵԼԻ ՄՈՏ

«Որ կուսակցությունն է իր տեսակետներով ձեզ ավելի մոտ» հարցին ի պատասխան, մասնակիցների 18 տոկոսը նշել է «Վրացական երազանքը», 14 տոկոսը՝ «Ազգային շարժումը», իսկ պաշտպանության նախկին նախարար Իրակլի Ալասանիայի «Մեր Վրաստանը՝ ազատ դեմոկրատներ» կուսակցությանն իր աջակցությունն է հայտնել 9 տոկոսը:

Հարցվածների մեծ մասը՝ 30 տոկոսը, պատասխանել է, որ «ոչ մի կուսակցություն» իր հայացքներով մոտ չէ իրենց: Բացի այդ, այս հարցին 8 տոկոսը պատասխանել է, որ չգիտի, թե քաղաքական որ միավորումն է իրեն վստահություն ներշնչում, իսկ 6 տոկոսը հրաժարվել է պատասխանել:

ԵԹԵ ՎԱՂԸ ԱՆՑԿԱՑՎԵՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ...

Հարցման արդյունքներով, եթե վաղը անցկացվեն խորհրդարանական ընտրություններ «Վրացական երազանք» կոալիցիայի օգտին կքվեարկեր հարցման ենթարկվածների 16 տոկոսը, 10 տոկոսը կպաշտպաներ «Ազգային շարժմանը», 7 տոկոսը՝ «Ազատ դեմոկտարներին»: 35 տոկոսը այդ հարցով դեռեւս որոշում չի ընդունել:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հարցման արդյունքներով, Վրաստանի բնակչության 58 տոկոսը հանդես է գալիս երկրի՝ Եվրամիությանն անդամակցության պաշտպանությամբ, իսկ 24 տոկոսը Եվրասիական միության կողմնակիցն է: Հարցման ենթարկվածների 8 տոկոսը ընդհանրապես դեմ է որեւէ կազմակերպությանը երկրի անդամակցությանը:

ՆԱՏՕ-ին անդամակցության հարցով բնակչության 69 տոկոսը այն դրական է գնահատում, անդամակցության դեմ է 21 տոկոսը:

Հատկանշական է, որ հարցման ենթարկվածների 13 տոկոսն է համարում, որ երկիրն ընթանում է ճիշտ ուղիով, 17 եւ 18 տոկոսի համոզմամբ, երկրի ընթացքը, համապատասխանաբար, սխալ է եւ բացարձակապես սխալ:

«Հասարակական կարծիքը Վրաստանում» սոցիոլոգիական հետազոտությունն անցկացվել է նոյեմբերի 17-ից մինչեւ դեկտեմբերի 7-ը: Հարցմանը մասնակցել է 1881 մարդ: Վիճակագրական սխալանքը կազմել է 1,8 տոկոս:

NDI-ի հետազոտությունը ֆինանսավորում է Շվեդիայի միջազգային զարգացման եւ համագործակցության գործակալությունը (SIDA): Հարցումներն անցկացնում է Կովկասի հետազոտական ռեսուրսների կենտրոնը (CRRC):

«ՎՐԱՍՏԱՆ»-Ը 95 ՏԱՐԵԿԱՆ Է

ԱՆԳՆԱՀԱՏԵԼԻ ԴԵՐ՝ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության անունից, ի սրտե շնորհավորում եմ «Վրաստան» թերթի խմբագրությանը, նրա յուրաքանչյուր աշխատակցին թերթի հիմնադրման 95-ամյակի եւ տարվա «Հանդուրժողականության աջակցի» պատվավոր կոչման շնորհման կապակցությամբ: Իրոք, անգնահատելի է ձեր այն դերը, որը դուք կատարում եք վրաց եւ հայ ժողովուրդների միջեւ բարեկամության ու երկրի ոչ վրաց բնակչությանը հասարակական կյանքում ինտեգրման աջակցության գործում:

Դարեր շարունակ վրաց ժողովուրդը խաղաղ համագոյակցել է երկրում ապրող այլ ազգերի ներկայացուցիչների հետ: Մեր պետության գլխավոր խնդիրներից մեկն է, որ Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացի՝ անկախ նրա էթնիկ ծագման, իրեն զգա իրավահավասար անդամ եւ ունենա մասնագիտական առաջընթացի, մասնագիտական ու պաշտոնական առաջընթացի համապատասխան պայմաններ: Նշեմ, որ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունն ակտիվորեն աշխատում է հասարակական կյանքում ոչ վրաց բնակչության ինտեգրման ուղղությամբ, ու այդ նպատակով իրականացնում է բազում միջոցառումներ: Ուրախ եմ, որ ձեր թերթի էջերը հաճախ տրամադրում եք այն բարեփոխումների ու նորամուծությունների լուսաբանմանը, որոնք, անտարակույս, նշանակալից են: Կրկին անգամ շնորհավորում եմ հոբելյանական տարելիցի եւ ստացած պարգեւի առթիվ, մաղթում արգասաբեր գործունեություն մեր բազմերանգ լրատվության տարածքում:

ԹԱՄԱՐ ՍԱՆԻԿԻՉԵ
Վրաստանի կրթության եւ գիտության նախարար

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՏԱՐԻՄ

Ի սրտե շնորհավորում եմ «Վրաստան» թերթի հիմնադրման 95-ամյա հոբելյանը: Համոզված եմ, որ այդ ժամանակահատվածում ձեր գործունեությամբ նշանակալի ավանդ եք ներդրել մեր երկրամասի բազմազգ հասարակությունում բարեկամական ու բարիդրացիական հարաբերությունների խորացման եւ, ընդհանրապես, մեր երկրի շինարարության գործում:

Գրեթե մեկ դար է անցել թերթի հիմնադրումից եւ վստահությամբ կարող եմ ասել, որ պատվով եք անցել այդ ճանապարհը: Հատկանշական է, որ տարիների ընթացքում հենց ձեր թերթի շնորհիվ Սամցխե-Ջավախեթիի բազմազգ բնակչությունը տեղեկատվություն էր ստանում երկրում ընթացիկ դրական տեղաշարժերի, տարբեր ոլորտներում անցկացված բարեփոխումների եւ օրենսդրական նորամուծությունների մասին:

Բոլոր լրագրողներին մեծ հարգանքով շնորհավորում եմ հոբելյանական տարելիցի առթիվ եւ մաղթում մասնագիտական առաջընթաց: Համոզված եմ, որ «Վրաստան» թերթը դեռ երկար տարիներ կլինի տպագիր լրատվամիջոցների շարքում եւ հավատարիմ կմնա ժուռնալիստիկայի գլխավոր սկզբունքներին ու իր ավանդույթներին:

Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ շնորհավորել առաջիկա Նոր տարին ու Սուրբ ծնունդը: Տա Աստված, որ տարին խաղաղություն եւ վերելք բերի մեր երկրին, իսկ անձամբ ձեզ եւ ձեր ընտանիքներին՝ երջանկություն ու հաջողություններ:

ԱԿԱԿԻ ՄԱՇՈՒՏԱՋԵ
Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում պետական լիազոր-նահանգապետ

ՀՈԲԵԼՅԱՆԻ ՆՇԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԻԱՆԱԼԻ ՊԱՐԳԵՎ

Լրացավ Վրաստանում լույս տեսնող հայալեզու «Վրաստան» թերթի հիմնադրման 95-ամյակը: Շնորհավորում եմ թերթին այս հիանալի տարելիցի առթիվ:

Ուղիղ մեկ ամիս առաջ, Հանդուրժողականության միջազգային օրվա կապակցությամբ, ժողովրդական պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհուրդը լրատվամիջոցների անվանակարգում «Վրաստան» թերթին շնորհեց «Հանդուրժողականության աջակցի» կոչում:

Շնորհավորում եմ թերթի ղեկավարությանը եւ խմբագրության բոլոր աշխատակիցներին այդ ճանաչման առթիվ:

Բացառիկ է լրատվամիջոցների դերը ժողովրդավարական նոր հասարակության եւ պետության շինարարության գործում: Առանձնակի նշանակալից է ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող թերթերի նշանակությունը: «Վրաստան» թերթը հենց նման պարբերական է, այն նպաստում է մեր երկրում ապրող ազգությամբ հայ Վրաստանի քաղաքացիների, այն պետության շինարարության գործում ակտիվ մասնակցությանը, որտեղ նրանք գտել են իրենց երկրորդ հայրենիքը:

Մեր տարածաշրջանում եւ ոչ միայն Քվեմո Քարթլիում ապրող հայ բնակիչների համար, «Վրաստան» թերթը կամուրջ է, որի շնորհիվ, նրանք մասնակցում են մեր ընդհանուր հայրենիքի՝ Վրաստանի հասարակական կյանքին, մեդիատոր է, բարի դեսպան հինավուրց պատմություն ունեցող երկու եղբայր ազգերի միջեւ, որոնք դարեր շարունակ ապրում են հարեւանությամբ:

Մաղթում եմ թերթին բազում տասնամյակներ արժանապատվորեն ծառայել այդ մեծ գործին:

ՊԱԱՏԱ ԽԻԶԱՆԱՇՎԻԼԻ
Քվեմո Քարթլիի՝ Քարթլիում պետական լիազոր, նահանգապետ

ԱՌԱՆՑ «ՎՐԱՍՏԱՆԻ», ՉԵՄ ՊԱՏԿԵՐԱՑՆՈՒՄ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՆ

Իրոք, հարցրեք ցանկացած ախալքալաքցու, թե ի՞նչ տեղ է զբաղեցնում «Վրաստանը» նրա կյանքում: Հավատացեք, գրեթե բոլորից կլսեք միանշանակ պատասխան. «Վրաստանը» միակ թերթն է, որը հասնում է մեզ ու պատմում այն ամենի մասին, ինչ տեղի է ունենում Վրաստանում, վիրահայ համայնքում եւ Մայր հայրենիքում:

Սիրելի «Վրաստան», այսօր, քո ծննդյան 95-ամյակի օրն է: Դու, ինքնուկես տասնամյա քո պատմության ընթացքում, արժանապատվությամբ կատարել ու կատարում ես վրաց եւ հայ ժողովուրդների բարեկամության ջատագովի, երկու պետությունների միջեւ բարիդրացիական հարաբերությունների հաստատման կամրջի դերը:

Անգնահատելի է նաեւ քո դերը վիրահայ համայնքի, մասնավորապես, մեր ջավախքահայերի կյանքում: Արդեն երկար տարիներ է, ինչ «Վրաստանը» մեզ համար տեղեկատվության այն հուսալի աղբյուրն է, որը մեր երկրամասի բնակիչներին, առանձնապես՝ վրաց լեզվի թյուր իմացության պայմաններում, թույլ է տալիս մանրամասն տեղեկություն ստանալ երկրում իրականացվող բարեփոխումների, օրենսդրական փոփոխությունների, երկրի անցուդարձի մասին:

Շնորհակալություն քեզ, «Վրաստան», մաղթում ենք քեզ երկարակեցություն, բովանդակալից ու հագեցված էջեր եւ, ամենակարեւորը, ընթերցողների բազմություն:

ՀԱՄԼԵՏ ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ախալքալաքի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ

ՍԻՐԵԼԻ՝ «ՎՐԱՍՏԱՆ», ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԴ

Թող զարմանալի չթվա, բայց ես պարզապես չեմ պատկերացնում մեր՝ Նինոծմինդայի շրջանը, առանց «Վրաստան» թերթի... Եվ դա, ինձ թվում է, միանգամայն բնական է, որովհետեւ 95 տարի շարունակ այն եղել է նաեւ ջավախահայության, այսպես ասած, կենդանի խոսափողը... Ավելին՝ հայելին... Մենք նրա թողարկած բոլոր համարներում տեսել ենք մեզ՝ որպես ջավախքցի, որպես հայ, որպես Վրաստանի քաղաքացի, որպես հին ու բարի ավանդույթների կրող ժողովուրդ... Ես, համենայնդեպս, առ այսօր չեմ հիշում մեկ համար, որտեղ մեր մասին թեկուզեւ փոքր նյութ չլինի տպագրված... Եվ այսօրինակ ուշադրությանը մենք առ այսօր անդավաճան ենք վերաբերվում: Հեռավոր գյուղերում էլ բաժանորդագրվում են թերթը եւ նրա տեղ հասնելուն սպասում անհամբերությամբ: Թեեւ այս ճանապարհին եղել են բավականին շատ դժվարություններ, որոնց հաղթահարման ճանապարհին օգնական ենք նաեւ մենք: Որպես զանգվածային լրատվության Վրաստանում միակ հայատառ միջոց՝ թերթն ունի հարուստ ու բովանդակալից պատմություն, եւ մեզնից յուրաքանչյուրը պարտավոր է իր բաժինը ներդնել նրա անհրաժեշտաբար պահպանման ու հարատեւության գործում՝ բաժանորդագրվելով, ընթերցելով, աջակցելով, քարոզելով... Ես սրտանց շնորհավորում եմ նրա 95-ամյակն ու մաղթում է՛լ ավելի առողջ, է՛լ ավելի կարեւոր, է՛լ ավելի բովանդակալից լուսաբանումներ, ընթերցողներիս համար՝ նորանոր ու հետաքրքիր խորագրեր: Իսկ խմբագրության կոլեկտիվին եւ նրա հմուտ խմբագիր Բայբուրթյանին՝ ուժ ու տոկունության ժամանակի մարտահրավերներին արժանապատիվ դիմակայելու համար:

ԳԱԳԻԿ ԿԱՐՍԼՅԱՆ
Նինոծմինդայի մունիցիպալիտետի վարչության նախագահ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՅՐ ԹԵՐԹԸ

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում այս օրերին Երեւանի «Հայաստանի Հանրապետություն» թերթում տպագրված բանասիրական գիտությունների թեկնածու Վահան Մաղալյանի հոդվածը՝ նվիրված «Վրաստան» թերթի պատմությանը (որոշ կրճատումներով):

Հայ մամուլի տարեգրության մեջ իր մնայուն տեղն ունի «Վրաստան» թերթը: Այն արդեն շուրջ մեկ դար առանց ընդհատումների, անխափան պարբերականությամբ լույս է տեսնում Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում եւ տարածվում Վրաստանի հայաբնակ քաղաքներում ու գյուղերում, ինչպես նաեւ առաքվում հայաշատ այլ վայրեր:

Գոյության բոլոր շրջափուլերում, անկախ այն բանից, որ հանդիսացել է Վրաստանի կուսակցական-պետական պաշտոնաթերթերից մեկն ու միշտ ենթակա վերադաս ղեկավար մարմիններին, հնարավորություններ է ստեղծել եւ իր էջերում լայն տեղ հատկացրել ոչ միայն Վրաստանի, այլ անդրկովկասյան հանրապետությունների ու սփյուռքահայության տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքին, արծարծել է հայ ժողովրդին հուզող խնդիրները, անդրադարձել անցյալի մեր պատմության լուսավոր ու մռայլ էջերին եւ մշտապես քարոզել է ժողովուրդների համերաշխություն: Այդ ընթացքում թերթը լույս է ընծայվել հինգ տարբեր անվանումներով:

«Վրաստանը» ասպարեզ է իջել մեծնշեւիկյան կարգերի օրոք եւ, որպես կոմունիստական օրաթերթ, ունեցել է ընդհատակյա տարածում: Նրա անդրանիկ համարը՝ «Կարմիր աստղ» վերտառությամբ, լույս է տեսել 1920թ. դեկտեմբերի 25-ին եւ 5 համար տպագրվելուց հետո, ոստիկանության կողմից հայտնաբերվել ու արգելվել է: Ընդհատակում տպագրված այդ համարների անվանական խմբագիրը եղել է Սմբատ Դովլաթյանը:

«Կարմիր աստղ» թերթի հրատարակությունը վերսկսվել է Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց մեկ ամիս հետո, 1921թ. փետրվարի 26-ից՝ որպես Վրաստանի կոմկուսի Կենտկոմի եւ Թիֆլիսի կոմիտեի օրգան: Այդ հատվածում թերթը խմբագրել է Սուրեն Երզնկյանը, ապա՝ Սարգիս Կասյանը: Ս.Կասյանին փոխարինել է Սերգեյ Խանոյանը, ապա խմբագիր է դարձել Ալեքսանդր Մյասնիկյանը: Ալ.Մյասնիկյանի մահից հետո՝ 1925թ. մարտից, խմբագիրներ են դառնում Աշոտ Խումարյանը (1925-1926թթ.) եւ Սարգիս Խանոյանը (1926-1927): 1923թ. մարտի 16-ից «Կարմիր աստղ»-ը անվանվել է «Մարտակոչ», իսկ 1927թ. հոկտեմբերից «Մարտակոչը» վերանվանվել է «Պրոլետար»: 1927-1938 թթ. թերթը խմբագրել են նշանավոր հրապարակախոսներ, կուսակցական ու պետական անվանի գործիչներ Աղասի Վարդանյանը, Երվանդ Ասրիբեկյանը, Վարդան Ատրյանը, Հովհաննես Պողոսյանը, Աշոտ Մարգարյանը, Արշավիր Գասպարյանը:

1938թ. օգոստոսի 12-ից «Պրոլետարը» վերանվանվել է «Խորհրդային Վրաստան», իսկ 1940թ. հոկտեմբերից՝ «Սովետական Վրաստան» եւ այդ վերտառությամբ տպագրվել է մինչեւ 1989թ. օգոստոսի 18-ը, որից հետո կրել է դարձյալ «Խորհրդային Վրաստան» անունը, իսկ 1991թ. դեկտեմբերի 15-ից անվանվել է «Վրաստան» եւ այդ վերտառությամբ լույս է տեսնում մինչեւ այժմ:

Շուրջ երկու տասնամյակ, թերթի խմբագրի պարտականությունները պատվով է կատարել Զավեն Պողոսյանը, որին 1959թ. սեպտեմբերի 1-ից փոխարինել է Հակոբ Բլրցյանը եւ այդ պաշտոնը վարել մինչեւ 1987թ. սեպտեմբերի 1-ը:

«Վրաստանի» ներկայիս խմբագիրը հասարակական-քաղաքական հայտնի գործիչ Վան Բայբուրթյանն է: 1987թ., երբ նա ստանձնել է խմբագրի պարտականությունները, «Սովետական Վրաստանի» տպաքանակը եղել է ընդամենը 27 հազար օրինակ, մեկ տարի էլ չանցած այդ թիվը դարձել է 40 հազար, իսկ երկու տարի հետո՝ 1990-ին արդեն հասել է 55 հազարի:

Վան Բայբուրթյանը նախորդ խմբագիրների մեջ միակն է, որ մինչեւ խմբագիր դառնալը, չի եղել կուսակցական աշխատող: Նա ավարտել է Թբիլիսիի համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը, որից հետո աշխատել է Թբիլիսիի մի շարք թերթերի խմբագրություններում, եղել է «Սովետսկի սպորտի» եւ «Կոմսոմոլսկայա պրավդայի» սեփական թղթակիցը Հայաստանում եւ Վրաստանում, ապա Մոսկվայի «Մամուլի նորություններ» գործակալության սեփական թղթակիցը Վրաստանում: Իսկ 1987-ի սեպտեմբերի 1-ից առ այսօր «Վրաստան» թերթի խմբագիրն է:

Վրաստանի հայկական համայնքը ներկայումս այդ թերթի միջոցով է ծանոթանում երկրի նախագահի հրահանգներին, խորհրդարանի ընդունած օրենքներին ու կառավարության որոշումներին, հայ բնակչության շրջանում լուրջ աշխատանք է կատարում այդ օրենքների ու որոշումների պարզաբանման ուղղությամբ: Թերթի միջոցով է վրացահայությունը հաղորդակցվում վրաց պետականության վերադաս մարմինների հետ եւ ծանոթանում նրանց գործունեության տարբեր կողմերին: Եվ իզուր չէ, որ ներկայումս շուրջ կես միլիոնանոց վիրահայ համայնքը «Վրաստանը» համարում է իր մայր թերթը:

Հուսով ենք, որ թերթը իր բազմահազար ընթերցողներին հուսախաբ չի անի եւ այսուհետեւ էլ կմնա իր դավանած սկզբունքներին հավատարիմ: